ԹԵՄԱ 5 ԱՎՍՏՐԱԼԻԱ ԵՎ ՕՎԿԻԱՆԻԱ

ԴԱՍ 5.2. Ավստրալիա և Օվկիանիա: Բնակչությունը և տնտեսությունը

• • •

Ներկայումս տեղաբնիկների՝ աբորիգենների թիվը 450 հազար է: Եվրոպացիները նրանց նկատմամբ վարել են ռասայական խտրականություն՝ դիսկրիմինացիայի քաղաքականություն, նրանց քշելով մայրցամաքի խորքերի անապատային շրջանները, կամ էլ՝ բնաջնջել (օրինակ՝ թասմանցիները): Այժմ բնիկների նկատմամբ կառավարության վարած քաղաքականությունը փոխվել է. Նրանց գումարներ և արտոնություններ են տալիս: Մայրցամաքի կենտրոնական մասում կառուցվել է բնիկների ոչ պաշտոնական մայրաքաղաքը՝ **Ալիս Սփրինգսը**: Բնիկները զբաղվում են հիմնականում որսորդությամբ և հավաքչությամբ: Նրանց հնարած բումերանգ զենքը վրիպելու դեպքում վերադառնում է որսորդի մոտ:

• • •

Օվկիանիայի բնակչության **կրոնական** կազմը նույնպես խայտաբղետ է: Եվրոպացիների շնորհիվ այստեղ իշխող կրոնը **քրիստոնեությունն** է: Ասիայից գաղթյալների շնորհիվ լայն տարածում ունեն նաև **մահմեդականությունը**, **հնդուականությունը**, **կոնֆուցիականությունը**, **բուդդայականությունը**: Մի շարք փոքր կղզիներում բազմաստվածություն է՝ դեռևս պաշտում են տեղական **ավանդական կուռքերին**:

Ներկայումս աշխարհամասի բնակչության բնական աճի միջին տարեկան ցուցանիշը մոտ է աշխարհի ցուցանիշին, միայն Մելանեզիայում և Պապուա Նոր Գվինեայում է, այդ ցուցանիշը մոտ երկու անգամ բարձր:

• • •

Ավստրալական Միություն: Ավստրալիայի մեկուսացած լինելը ծովային գլխավոր ճանապարհներից և հեռու գտնվելը զարգացած երկրներից,ինչ-

պես նաև երկարատև գաղութային անցյալը իրենց բացասական հետքն են թողել նրա տնտեսական զարգացման վրա:

Ավստրալիայի ժամանակակից տնտեսության մեջ մեծ է **անգլիական ձեռագիրը**:

Այսօր Ավստրալական Միությունը զարգացած, ինդուստրիալ- ագրարա-յին եկիր է,որտեղ զուգակցվում են ինչպես բարձր զարգացած,այնպես էլ զարգացող երկրներին բնորոշ տնտեսական հատկանիշներ (**տնտեսութ-յան երկակի բնույթ**): ***Այդ առումով նման է Կանադային***: Բացատրեք երևույթը:

• • •

Էներգետիկան առավելապես հենվում սեփական հարուստ ածխա-յին,նավթագազային պաշարների վրա: Երկրում աննշան է ջրաէներգետի-կայի բաժինը,դրան հակառակ մեծանում է արեգակնային էներգիայի տե-սակարար կշիռը (ինչպե՞ս կմեկնաբանեք):

Գյուղատնտեսության մեջ շարունակում է մեծ մնալ անասնապահութ-յան դերը՝հատկապես՝ մանր եղջերավոր: Ոչխարների գլխաքանակը մոտ 200մլն. է:

• • •

Տրանսպորտային ցանցը խիտ է երկրի հարավարևելյան և ծովափնյա շրջաններում,մինչդեռ ներքին շրջաններում այն խիստ նոսր է: Բնորոշ է նաև այն,որ գլխավոր երկաթուղին հատում է հարավային և արևելյան ծո-վափնյա շրջանները: ներքին նոսրաբնակ-անապատային հատվածներում գերազանցապես զարգացած է ավտոմոբիլային տրանսպորտը:

Արտաքին բեռնափոխադրումները գերազանցապես իրականցվում են ծովային տրանսպորտով: Ծովային խոշոր «**դարպասներն**» են համարվում՝ **Սիդնեյը**, **Մելբուռնը**, **Նյուքասլը**, **Պերտը**, **Բրիսբենը**:

• • •

Արդյունաբերական ոչ մեծ ձեռնարկությունները հիմնականում մշակում են գյուղատնտեսական մթերքներ,ձկնեղեն :

Արդյունաբերական զարգացման որոշակի մակարդակի են հասել նաև **Նաուրուն**, ու **Նոր Կալեդոնիան**: Այս կղզիները աչքի են ընկնում ֆոսֆո-րիտի և նիկելի հանքաքարի արդյունահանմամբ:

• • •

Ավստրալիա մայրցամաքի ներկայիս բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում են եվրոպեոիդները:

Խայտաբղետ է նաև բնակչության ազգային կազմը: Ավստրալիան և հատկապես Օվկիանիան համարում են «ժողովուրդների թանգարան»: Լեզվական, մշակութային, աշխարհագրական տարածվածության առումով դրանք միավորված են հետևյալ խմբերում՝ մելանեզացիներ,միկրոնեզացիներ և պոլինեզացիներ:

Ժողովուրդները ազգային համախմբման տարբեր աստիճանների վրա են: Համեմատաբար բարձր՝ **ազգի** աստիճանի վրա են **անգլոավստրալացիները**, **անգլոնորզելանդացիները** ինչպես նաև **հավայացիները** ,ազգային համախմբման գործընթացի մեջ են **ֆիջիցիները**, **թոնգացիները**, ազգության աստիճանի վրա են Նոր Զելանդիայի տեղաբնիկները՝ **մաորիները**, ինչպես նաև՝ **թաիթցիները**: Մյուսները դեռ գտնվում են **ցեղային** կարգավիճակում:

• • •

Բնակչության գլխավոր ***ազգային զբաղմունքներն*** են համարվում՝ զբոսաշրջային ինդուստրիան, հուշանվերների արտադրությունը, կոկոսյան արմավենու,արժեքավոր փայտանյութի արտահանումը(Պապուա Նոր Գվինեա, Նոր Զելանդիա),ինչպես նաև թռչնաբուծությունը և ձկնորսությունը: Օվկիանիային է բաժին ընկնում անանասի (արքայախնձորի) համաշխարհային արտահանության **ավելի քան 90%-ը**: